ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի հուլիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 31487.6 մլն դրամ՝ պլանավորված 29400.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.1 տոկոսով կամ 2087.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 65.8 տոկոսով կամ 12496.8 մլն դրամով, որից 10081.8 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Հուլիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4536.6 մլն դրամ՝ պլանավորված 4000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 13.4 տոկոսով կամ 536.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 22 տոկոսով կամ 817.4 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 101 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 30 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 68.2 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 24 ստուգում՝ 67.5 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում շարունակվել են հսկողական միջոցառումները, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 2 և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1 դեպք:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 87 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 69-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 7-ը՝ ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 3-ական՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության ու դրամական միջոցների շարժի և 5 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 14 վարչական գործ՝ 268.2 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 5 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 4.6 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 78 վարչական գործով սահմանվել է 1.0 մլն դրամ վարչական տուգանք:

Հաշվետու ամսում հարուցվել է 1 քրեական գործ, որով պետությանը հասցված վնասը կազմել է 1.3 մլն դրամ, կարճվել 1 քրեական գործ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 10066 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8037:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 51 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 143 վարձու աշխատողի՝ 22.2 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 45 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության կողմից հաստատվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի N 138 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշումը:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, այդ թվում՝ վերադաս հարկային մարմին համարվող կառուցվածքային ստորաբաժանումների, հարկային տեսչությունների գործառույթները:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև

հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հուլիս ամսում հասարակական միավորումների և այլ շահագիգիռ անձանց մասնակցությամբ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգի» նախագծի շուրջ, որի արդյունքներով ձևավորված առաջարկությունները ներառվել են նախագծում և ներկայացվել կառավարության հաստատմանը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել են առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Կարևորելով համակարգն արհեստավարժ, նոր մտածողությամբ օժտված և ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող երիտասարդ կադրերով համալրելու գործընթացը՝ հունիս և հուլիս ամիսների ընթացքում համակարգում կազմակերպվել են հարցազրույց և փորձուսուցում՝ հարթակ ստեղծելով պոտենցիալ մասնագետների բացահայտման ու համակարգում աշխատանքի ընդունվելու համար: Հարցազրույցի և փորձուսուցման արդյունքներով 52 դիմորդներից լավագույն ցուցանիշներ ցուցաբերած 12 դիմորդներ հրավիրվել են հարկային համակարգում պայմանագրային հիմունքներով աշխատանքի:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 233, ելքագրվել՝ 57 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 10 գրություն, որից 2-ը՝ «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով: